



# Հ Յ Ա Գ Ր Ա Կ Ա Խ Ա

## Ե Ր Ա Ն Ե Լ Ի Օ Ր Ե Ռ

1. Այս օրերին, երբ արտասահմանի որոշ կուսակցական թերթեր իրենց գոլոյն ունենալով Բուստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը, կազմակերպված հարձակում են սահմանադրության Սայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ, իբր թե ի պաշտպանություն Տաճան Կիլիկիի Աթոռի, մեր մոտածումը գրենում է դեպի մոտավոր անցյալը, մանավանդ հետ առաջին Բամաշխարհային պատերազմի շրջանը, երբ քայլ առ քայլ զարգանում էր իրավ եղբարական համերաշխ գործակցություն Ս. Էջմիածնի և Տաճան Կիլիկիի Աթոռների միջև:

2. Ծշմարիտ է, թե հեռավոր անցյալում, երբեմն խանգարվել է այդ համերաշխությունը, և տագնապահի կացություններ են ստեղծվել ինչ-ինչ արտաքին պայմանագրի բերումով կամ երկու կողմերի որոշ հոգնորականների ամխորուրդ ու հախուններքավորումների հետևանքով, սակայն այդ շրջանները կարծատն են եղել ու բնական հարաբերությունները վերականգնվել են, կանոնական իրավասությանց սահմանների պահպանումով և ճանաչումով Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի վերին հեղինակության, իբրև Ըստիանական Հայրապետը համայն Հայ Առաքելական Եկեղեցու:

3. Իբրև համերաշխության պատմական օրինակներ, հիշենք միայն երեք իրողություններ:

17-րդ դարում էր, երբ Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերությունները

վատթարացել էին, ու կատարվում էին կանոնական անկարգություններ և իրավասությանց սահմանների խախտումներ, այլ խոսքով՝ անտեսվում էին Հայ Եկեղեցու կանոնական միությունը երաշխավորող մկրութեքները: Բայց օրվա հայրապետները գիտակցելով վտանգը, 1858-ին հանդիսան են ունենում Երուսաղեմում, Հայոց Պատրիարքության հարկի տակ, ողջագործվում են իբրև եղբայրներ, վերականգնվում են օրինական կարգն ու կանոնը իրենց Աթոռների հարաբերությանց և իրավասությանց մեջ, և այսպիսով վերսկսվում է համերաշխ միջավիճակ և գործակցություն նրանց միջև:

4. Իբրև հիշատակության արժանի համերաշխության պահ, նշենք նաև այսուել Մեծ Եկեղեցի ամավոր ողբերգությունից հնատ ստեղծված ծանր կացությունը, երբ Կիլիկյան Աթոռը, հուսահատության անդունդին մոտեցած, իր թշվար զավակների հետ միասին գտնվում էր անտեր ու անտոն վիճակում: Այդ օրերին նովճիսկ Եղեկ են մտածողներ, որ այլևս վերջ պետք է տալ Կիլիկյան Աթոռի գոյությանը, այն փոխադրելով Երուսաղեմ ու միացնելով տեղի Հայոց Պատրիարքության Աթոռին: Սակայն այդ հուսահատական պահը շուտով հաղթահարվել էր, և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ե Հայրապետի հրամանով ու Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի կարգադրությամբ, հատուկ համաձայնագիր էր կնքվել 1929-ին, որով Երուսաղեմի Հայոց Աթոռի հրավասության ներքև գտնվող՝ Լի-

բանանի և Դամասկոսի թեմերը փոխանցվել են Կիլիկյան Աթոռոյի հրավատության ներքև, որպեսզի այդպիսով տեղահան եղած Կիլիկյան Աթոռը, Կիլիկյան և Հայեափի իր թեմերի հետ միասին, գոյատնի ու պահպանի իր պատմական Աթոռի առաքելությունը Հայ Եկեղեցու կառուցում:

Ահա մի պատմական սքանչելի օրինակ հոգեշնն համերաշխության և հայաշոնչ ներայրության:

5. Համերաշխության երրորդ պահ ենք Ըկատում Ս. Էջմիածնի գահակալ, երջանկահիշատուկ Տ. Տ. Խորեն Ս. Մուրադբեկյանի մահվան տիտր օրերը, երբ Կիլիկյան Աթոռը իր ողջ միաբանությամբ, ի գոյսի ունենալով իր ծերունազարդ Տ. Տ. Սահման կաթողիկոս Խապայանին, սրտառուց կերպով մասնակցել է Հայ Եկեղեցու մեծ սպին, որով մի անգամ և արտահայտվել է սիրայիր եղբայրությունը Ս. Էջմիածնի ու Տաճան Կիլիկիի Աթոռությունի միջև:

Ահա մի հատված Կիլիկյան Աթոռի «Հայկ» պաշտոնաթերթի խմբադրակնից.

«Ծանթահարիչ էր Սարի 11 թվակիր Երևանացած Ամենապատիկ Ս. Պատրիարքին հեռագիրը, որով կգումար Ընդհանրական Հայրապետի Տ. Տ. Խորեն Ս. Սահման կաթողիկոսի դառնադես մահը՝ սրտի կաթվածի հետևանքով։

Խիստ Վշտալի և հոգիչ էր այն Վայրկանը, երբ նորին Ս. Օծություն Տ. Սահմանը, լսեց Ընդհանրական Հայրապետին մահվան բոթը. քանի ողջ Վայրկյան լուս մնաց ան, գոյսիսը կախ և աչքերը փակ և ի վերջը, կարծես հարվածին պատճառած թմրութենեն ուշաբերելով, ըսավ.—«Ես պատրաստ եմ փոխան Անոր մեռնելու, Եկեղեցին Անոր պետք ուներ, տակալին ելիտարարը, էր բալուտայմամբ իմ տարիքին, հայ ժողովուրդը շատ բան կապաւ Անոր բազմապիսի կարողություններեն. յուր հանկարծակի մեկնումով խոր խոցեց արդեն խոցույալ սիրու. երեսունվեց տարվան կաթողիկոսության ընթացքին ողբացի ինձ լծակից պատվական Հայրապետներն, Խրիմյան, Խզմիրյան, Սուրենյան, Կյուլսերյան և ահա ի լրումն դժբախտությանց Մուրադբեկյան... Թող Աստված լուսավորք հոգին և Մայր Աթոռոր միշտ հաստատ պահե»։

Եվ ապա «Հայկ» պաշտոնաթերթի խմբագիրը շարունակում է.

«Տաճանվեց դարերն ի վեր հայության աչքը միշտ հառած է Ս. Էջմիածնի և երբեք չէ խարված, Հայ Եկեղեցին եղած է

միակ հաստատուն և տևական միջնաբերդը՝ հայության գոյությունը պահպանող, Հայ Եկեղեցին հայության հետ տառապած է, հայության հետ տեղափոխված է, տառագրված է, և սակայն միշտ Ս. Էջմիածնը իր հի հմայքը պահած է և հայությունը երբեք չէ մողցած զան, և ամեն տեսակ զոհորությանց ենթարկված է՝ Էջմիածնը և անոր Կենաւտու հիշատակը վառ պահելու համար; Էջմիածնը զանազան ժամանակներու մեջ թշնամիներէ պաշարված ու ավերված է, Հայրապետական գահը ժողովուրդին հետ տեղեւ տեղ փոխադրված է, Հայրապետներ հայածված, չարչարված և գերի ալ տարվողներ եղած են, սակայն Էջմիածնը միշտ հայ ժողովուրդի մոքին ու սրտին մեջ այնպիսի հաստատուն տեղ մը գրաված է, որ բոլոր փոթորիկներն, վերիվայրումներն ենտու Ան իր գոյությունը պահած է շնորհիկ Եկեղեցաւեր և ավանդապահ հայ ժողովուրդի անմկուն կամքի ուժին։

Կիլիկիի տարագիր Կաթողիկոսությունը, իր ալեգարդ գահակալով և նորակազմ միաբանությունով, թեմակալ սրբազնելով և տարագիր թեմականներով, Կմադթե, որ Հայ Եկեղեցը վրայեն շուտ վերնա սուգի և տիսրության քողըը, Մայր Աթոռը օժտվի արժանավոր գահակալով մը և Լուսավորչի կանթելը իր անուշ պալումներով միահիմք Վշտահար ու սպավոր հայ ժողովուրդը» («Հայկ», 1938, մայիս):

Չի կարելի սույն տողերը կարդալ առանց հոգեշարժ հոգում ապրելու։

Ահավասիկ իսկական պատկերը Կիլիկյան Աթոռի հարազատ հոգու։

6. Մեծի Տաճան Կիլիկիի Աթոռոյի Եկեղեցական միության և Եղբայրական համերաշխ գործակցության այդ ոգին, մնաց Անթիմասի պահապան հրեշտակը նաև լուսաբնակ Տ. Տ. Գարեգին Ս. Հովհաննիս կաթողիկոսի գահակալության տարիներին։ Եկեղեցական միության ոգու և համազգային միաբանության անմոռանալի պահեր եղան Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ընտրությունն ու օծումը, որին անձամբ մասնակցեց և նախագահեց Տաճան Կիլիկիի մեծ Հայրապետը։

7. Ավաղ, սակայն, միության և համերաշխության այդ ոգին, 1956-ից հետո զոհ գնաց՝ Եկեղեցու հետ կապ չունեցող միջկուսակցական հակամարտ փոթորիկներին՝ բոլորին ծանոթ հետևանքներով։

Այսուեղ մեր նպատակը չէ դատումներ

անել այդ տիսոր օրերի իրադարձությունների և դրանց հետևանքների մասին: Միայն կամենում ենք մեր հաստատ համոզումը արձանագրնել, որ արտասահմանում, մեր Եկեղեցու ծոցում պեսք է վերջ գտնեն գոյատևող տագնապալի կացությունները, ամեն գնով, որովհետև այսպես հետզինեւու պիտի վտանգվի մեր Մայր Եկեղեցու կրոնական և ազգային պատմական առաքելությունը հայ Սփյուռքի տարածքի վրա: Ամեն ճշմարիտ հայ հարց պեսք է տա իրեն, մեր օրերին ո՞վ, ի՞նչ շահ ունի Հայունիք-Սփյուռք կամորջը քանդելու կամ տկարացնելու Եկեղեցական

մակարդակի վրա: Ի՞նչ են մոտածում արդյոք Անթիլիասի մեր Եղբայրները:

Մենք ողջունելի ենք գտնում Մայր Աթոռին և Կիլիկյան Աթոռի գահակալների ճիգերը այս ուղղությամբ և ուզում ենք հոյս հայունել, որ հակառակ որոշ թերթերի դիտումնավոր և չարամիտ աղմկարարության, Տերը օգնության պիտի հասնի իր իսկ հիմնած Հայատուանյաց Առաքելական Եկեղեցուն:

Եվ մեզ, այսօրվաններիս, թող պայծառ օրինակ հանդիսանան մոտավոր անցյալի եղբայրության և համերաշխության երանելի օրերը, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների միջև:

